ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՄԱՍԻՆ

«Արվեստագիտական հանդես» գիտական պարբերականը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական օրգանն է:

«Արվեստագիտական հանդես» գիտական պարբերականը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, 2019 թվականից:

Հրատարակվում է տարեկան երկու համար:

«Արվեստագիտական հանդես» գիտական պարբերականում հոդվածների տպագրումն իրականացվում է անվճար հիմունքներով:

- **հայեցակարգը,**

Գաղտնիք չէ, որ հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում մշակութային կյանքի բոլոր բնագավառներում ձեռք է բերել մեծ ու նշանակալի նվաճումներ:

Անցած տասնամյակների ընթացքում Հայաստանում գիտության մյուս ճյուղերին զուգընթաց մեծ թափով զարգացավ արվեստագիտությունը՝ բարձրանալով որակապես նոր մակարդակի: Հրատարակվել է արվեստագիտական պատկառելի գրականություն, և բազմաթիվ մեծ ու փոքր հետազոտությունները, ստվարածավալ մենագրություններն ու սկզբնաղբյուրների հրատարակությունները վկայությունն են այն իրողության, թե ինչ ծանրակշիռ աշխատանք է կատարվել հայ արվեստին վերաբերող հարցերի գիտական մշակման ուղղությամբ: Այս աշխատություններից շատերն արժանացել են գիտական լայն ճանաչման, դարձել արվեստաբանների ու արվեստասերների սեղանի գիրք, մի մասն էլ արժանացել է կառավարական բարձր պարգևների՝ պետական մրցանակների:

Սակայն այսօր ինչպես գիտության մյուս բոլոր ճյուղերում, այնպես էլ արվեստագիտության բնագավառում կան բազում չլուսաբանված հիմնախնդիրներ, գիտական մանրազնին ուսումնասիրության և արդիականության դիրքերից վերագնահատման կարոտ բազմաթիվ հարցեր, որոնց քննարկմանն ու լուծմանն է միտված «Արվեստագիտական հանդես» գիտական պարբերականը:

«Արվեստագիտական հանդես»-ի էջերում լուսաբանվում են հայ արվեստի ու ճարտարապետության խնդիրները, ինչպես նաև հայ ժողովրդի մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ: Հանդեսը լայնորեն լուսաբանում է Հայաստանի Հանրապետության արվեստագիտական և մշակութային նվաճումները:

Արվեստագիտական հիմնախնդիրների քննարկմանը նպաստելու նպատակով հանդեսն ունի գիտական քննարկումների բաժին, որը կօժանդակի ստեղծագործական բանավեճերի ծավալմանը: Հանդեսն ունի նաև բնագրերի հրապարակման, գրախոսությունների, գիտական լուրերի, տեղեկությունների և այլ բաժիններ:

Պարբերականի ուշադրության կենտրոնում են գտնվում նաև գեղարվեստական կյանքի արդի հիմնախնդիրները, Հայաստանի և Արցախի Հանրապետություններում և հայկական Սփյուռքում ընթացող գեղարվեստական պրոցեսները, դրանց հետազոտության ու գիտատեսական իմաստավորման խնդիրները:

Միանգամայն տրամաբանական է, որ «Արվեստագիտական հանդես»-ը ստեղծվել է հենց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում, որը հայ արվեստագիտության գլխավոր կենտրոնն է, այն միակ գիտական օջախը, որտեղ կատարվող

ուսումնասիրությունների կարևոր ուղղություններն են հայ արվեստի գրեթե բոլոր տեսակների (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ և կիրառական արվեստներ, երաժշտություն, թատրոն, կինո և հեռուստատեսություն) պատմության և տեսության հիմնահարցերը: շուրջ 80-ամյա այս ինքնատիպ գիտահետազոտական հիմնարկում աշխատանքներ են տարվում հայ արվեստի դասականների ստեղծագործական, հուշագրային, նամակագրական ժառանգության ակադեմիական հրատարակության ուղղությամբ:

Վերը նշված նպատակներն իրականացնելու համար մեր վեցամսյա պարբերականը մտադիր է իր շուրջը համախմբել հայ արվեստով զբաղվող առաջատար արվեստաբաններին:

«Արվեստագիտական հանդես»-ի առաքելությունն է արվեստաբան-գիտնականների համատեղ ուժերով ու ջանքերով նոր լիցք հաղորդել հայ ժողովրդի արվեստի և ճարտարապետության ուսումնասիրության աշխատանքներին, նպաստել արվեստագիտության հետագա զարգացմանն ու վերելքին, արվեստագիտության հանգուցային հարցերի անաչառ և սկզբունքային լուսաբանմանը:

- **նյութերի ընտրման հիմնական չափանիշները,**

Ընտրվում են արվեստագիտության և /կամ ճարտարապետության թեկնածուների և դոկտորների գիտական հետազոտությունները, որոնք ուղարկվում են գրախոսության: Հոդվածներն ընդունվում են տպագրության բացառապես Գրախոսի գրավոր դրական կարծիքի առկայության դեպքում: բացատիկ մդեպքերում միջգիտակարգային գիտական պարբերականն ամբիոն է տրամադրում նաև փիլիսոփաներին (արվեստի տեսության հարցեր), գրականագետներին ու պատմաբաններին՝ արվեստին առնչվող հետազոտությունների արդյունքների հրապարակման համար:

Երիտասարդ արվեստաբանի ամբիոնը նախատեսված է ասպիրանտների և հայցորդների գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակման համար: Յուրաքանչյուր համարում տպագրվում է ոչ ավել, քան երկու նմանատիպ հրապարակում:

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ

- **կառուցվածքը՝ ըստ ուղղությունների և բաժինների,**

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԹԱՏԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՆՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ
ԵՐԿՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԻ ԱՄԲԻՈՆ